ԺԱՄԱՆԱԿ

ՀԱՆԴԷՍ ՀԱՅ ՐԵՆԱՆՈՒԷՐ

11 ՄԱՐՏ Ե· ՏԱՐԻ 1867 ԹԻՒ 110

Կը հրատարակուի երկու չաբաթը անգամ մը ԸՐՔԹ օրերը։ Բաժանորդագրութիւնն գինը պարելոն 3 արծաթ Ութթիւէյ կանխիկ։ Խորհանելիոր բաժանորդի ուխտ պրոթ պարոյն վերջը պարելոն ԼԻԸ-ԼԻԸՈՆ կաղմակ օրինակը։

Դուրս երկուքէ ւրագրոյ ձամբու ծախքը առնողին վրայ է։ Սորագրութիւնները պարոյն առաջին նուէն կ'ըսկսին։

ՓԵՏՐՎԱՐ 24 Ի ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՈՑ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Երեք ամիսի մօտ եղաւ որ Ժողովրդեան մէջ Երեսփոխանական Ժողով կազմելու խնդիրը կը լսուէր. և ուր ուրեմն 60 էն աւելի Երեսփոխանները վերջ. 24 ին ուրբաթ օրը նիստ մ'ունենան ի Պալաթիա, Ս. Լուսաւորչիչ եկեղեցւոյ մէջ։

Որոնք որ այս Ժողովին ըլլալուն պատճառները և եղած որոշմանց նպատակը չեն գիտեր, ա նոնք Թերևս մեծ նշանակութիւն մը չտան նոյն ասուր նիստին և որոշմանց։ Բայց մեր և մեզի համամիտ շատերու քով նոյն Ժողովը մեծ նշանակութիւն մ'ունեցած է։

Երեսփոխանական Ժողով գումարելու ճիգերը եղան այն պատճառաւ որ մասնաւոր անձանց միջոցաւ ոչ Կաթոլիկին Ժողովոյ և ոչ Երեսփոխանական Ժողովոյ Սոյս և Պղտմամարոյ խնդրոց մասին տուած վճիռները չի ջնջուին և այն ազգային Ժողովոյ պատիւը և արժէքը պահուի։

Ընդհակառակ. 19 ին Խմբագրաց միաբանութեամբ առ Ս. Պատրիարքը Հայրն մատուցած խնդրագիրը, և Ժողովրդեան հանրագիրը այս նպատակին համար էին. Խմբագրաց կողմանէ առ Ս. Կաթողիկոսն մատուցուած ուղերձին մէջ ալ ակնարկուած էր այս։

Բայց ոճ պիտի հակէր այդ Ժողովոյ պատասխան՝ Ժողովրդէն զատ։ Ընդհակառակ մարտ 20 ի պետական հարուածը՝ որով Սահմանադրութիւնը վերաքննութեան առնուեցաւ, և սահմանադրական Ժողովները լուծուեցան, լուռ թեամբ և հլութեամբ մարսուեցաւ։ Ս. Էջմիածնի կաթողիկոսական խնդրոյն մէջ նախ բարեկարգութիւն և ապա ընտրութիւն ըսուեցաւ. բայց մասնաւորաց աղդեցութիւնը յաջողեցաւ նախ ընտրութիւնն ընել տալ, բարեկարգութիւնը ընտրելոյն միջոցաւ խոստանալով։

Ասոնց նման շատ եղելութիւններ կան, որոնց մէջ մասնաւոր անձինք աւելի մեծ ներգործութիւն ունեցած են, քան Երեսփոխանական Ժողովը, որ Ազգը կը ներկայացնէ, վասն որոյ Երեսփոխանաց և Ազգին զգայուն մասը ի խոր խորհուրդ լռութեամբ կը դիտէր։

Այս մասնաւոր անձանց ներգործութիւնը մենք Դիվանատորութիւն անուանած ենք, սակս Յաճանակիս 106 թիւը։

Դիվանատորութիւնը որ այսչափ բաց ու անարգել ասպարէզ ունեցաւ իր դէմը, իր ամէն նպատակին յառաջ տանելու, և աղդային գլխաւոր ու կենսական խնդրոց վրայ ներգործելու. անշուշտ նաև Սոյս և Պղտմամարոյ խնդրոց մէջ ալ պիտի ներգործէր, և Վ ճ. ու Երեսփ. Ժողովոյ վճիռը չօդս պիտի ցնդէր։

Դիվանատորութեան և անոր կամակից և գործակից անձանց բոլոր աղդեցութիւնն ու ներգործութիւնը փճացնելու համար էր որ ահա գումարուեցաւ փետրվար 24ի Երեսփոխանական Ժողովը։

Ըստ ինքեան պարզ և անհնչան համարուած խնդրոյ մը մէջ ջարդուփշուր եղան տարիներէ ասդին հնարագիտութիւնները. Երեսփոխանութիւնը մեծ յաղթանակ մը կանգնեց և Ժողովուրդը ծափ զարկաւ։ Ինչ մէջ կը կարծուէր Երեսփոխանութիւնը, ընդհանուր և

յաւտահատ, ու Դիկտատուրութեան միմիայն գործիք, գործիք կայր. կը կարծուէր Թէ ան իր կոչումը ու պաշտօնը չմոռնար, և իր իրաւանց տէր չիմանդիր ու Թող կուտայ որ քանի մը անձանց ձեռք խաղալիկ ըլլայ:

Բայց այդպէս չէ եղեր. ընդհակառակը տեսնուեցաւ վերջապէս, երբ Յրեաւախանուրեան Թիկունք կեցաւ ժողովուրդը:

Ժողովուրդը որ լիակատար էր եղեր Դիկտատուրութեան և Յրեաւախանուրեան մէջ բացուած լուծման պատերազմին, ժողովուրդը տեսնելով այն քանի մը անձանց յանուն Ազգին գործած ապօրինաւորութիւնները, և Դիկտատուրեան իւնչ ըլլալը հասկցած, ու անոր ազդեցութիւնը վերցնելու ժամանակը հասած ըլլալը գիտնալով, իր ձայնը բարձրացուց. Խմբագիրք այս ձայնին արձագանք եղան, և Յրեաւախանուրիւնն ի ժողով գումարելու խնդիրը ծագեցաւ:

Ընդհանր երկու ամիս ձգձգեցին ժողով գումարելու օրը, զանազան պատճառներ մէջ բերին, բամազան, պայքամ, ևն: Վերջապէս վերջ. 10ին Յրեաւախանուրիւնը ժողովի հրաւիրելու պարտաւորեցան. ժողովրդեան կողմէն Պատգամաւորութիւն մը պատրաստուած էր ներկայանալու ժողովին, իր ձեռքն ունեցած հանրագրերովը, որ ստորագրուած էին մայրաքաղաքիս բոլոր Թաղերուն բնակչաց կողմէն. և որոնց նպատակն ուրիշ բան չէր բայց եթէ Վ ի՛ճ. և Յրեաւ. ժողովոյ վճռոյ գործադրութիւնը:

Սակայն խորամանկութիւնը հոն ալ իր խաղը խաղալ ուզեց. Ս. Նախագահին բերնով դրամի խնդիրը մէջ դրաւ. դրամ կը խնդրէ Յրեաւախանուրիւնէն այն Վարչութիւնը, խառն ժողովը, որ իր ծնունդը Յրեաւախանուրիւնէն կամ Ազգէն առած չէ: Թէպէտ այս խնդիրը ականջի եռաց ձգուեցաւ, Թէպէտ անտարբեր կարծուած Յրեաւախանուրիւնը բաւական աղէկ ընդունելութիւն մ'ըրաւ նոյն առաջարկութեան. բայց ինչ օգուտ, ժամերը կորսուեցան. և Պատգամաւորութիւնը ուշ ներկայացաւ ժողովին, որով յաջորդ շաբաթուան նիստին Թողուեցան (մեծ դժուարութեամբ) երկու ամիս ի վեր խորհրդակցութեան համար ժողովին ներկայանալու պատրաստուած խնդիրները:

Յաջորդ շաբաթուն հաղիւ 20 երեսփոխան ներկայ էին: Ընդունի կարծուեցաւ Թէ Յրեաւախանուրիւնը ժողովրդեան խնդիրն ու կամքը էյարդելու համար այդ ցոյցն ըրաւ: Բայց ասանկ չէր:

Յրեաւախանուրեան մէջ Թէպէտ անտարբեր անձինք ըլլալն ալ չեն ուրանար. բայց զգայուն մասին գալու պանցաւուրիւնը զանազան պատճառներ ունէր: Ասոնց մէ կայ որ Դիկտատուրութեան դէմ սաստիկ զայրոյթ և վիշտ կրելով մարտ 20ի դէպքին վրայ, յուսահատ գալ չէին ուզեր ժողովի: Երբիշ մասմ՛ալ Ս. Պատրիարքէն վհատած էին, որ Դիկտատուրութեան ձեռք գործիք ըլլալին դատ, Սահմանադրութիւնը եթէ ժամանակ առաջ վերաքննուրեան առնուեցաւ ալ, գէթ շատ քանի մը ամսուան մէջ աւարտել տալու վրայ չըլար. և այսպէս ազգային գործերը ուղղմելի վիճակի մը երեմարկուելէն դատ կրօնափոխութեան ալ տեղիք արուեցաւ: Երբիշ մասմ՛ալ Դիկտատուրութեան գործիք ըլլալով անոր հետ ժողովի չգալ որոշած էին, որպէս զի Պալաժէնիայի խնդիրը չյուզուի. միտքէ որ Ս. Կաթուղիկոսը մեկնի Պոլսէն, որ մայիսին կը կարծուէր. բայց ատոր պղտիրներէ տեղեկութիւն առնուեցաւ Թէ շատ մօտ է: Երբիշ մասմ՛ալ նախորդ շաբաթուան ժողովին մէջ յուզուած անկարևոր խնդրոյն վրայ վըշտացած գալ չէին ուզած. մէկ մասմ՛ալ նոյն աւուր անձրևը և տեղւոյն հեռաւորութիւնը պատճառ բռնելով եան մնացած էին:

Ընդհանուր բազմութիւն մասերու բաժնուած տարակարծիք Յրեաւախանները միացնելու ալ խօսք տուաւ Պատգամաւորութիւնը ի գիմաց ժողովրդեան: Ասոր իւրաքանչիւր Թաղի մէջ մանաւանդ ժողովները կազմելու և նոյն Թաղի Յրեաւախանները անձամբ երթալ տեսնել և ժողովին հրաւիրել որոշեց. ինչպէս որ ըրաւ և յաջողեցաւ ալ. վերջ. 24ին 60էն աւելի Յրեաւախաններ ներկայ էին, և այլևայլ բացատրութիւններ տալէ ետքը 8—10 Յրեաւախաններէ ալ յատուկ գրեր հասան, իրենց կարծիքը յայտնելով Սոյ և Աղթամարայ խնդրոց համար, և նոյն աւուր նիստին մնացեալները համամիտ ըլլալնին ցուցնելով:

Ահա այս ժողովին մէջ էր որ Յրեաւախանուրիւնը իր յաղթանակը կանգնել յաջողեցաւ, հակառակ ամենց ակնարկութեան, որ բոլոր խնդիրը պարզ ու թեթև և բոլորովին անվնաս կը ցուցնէին: Յրեաւախանուրիւնն ընդունեց Թէ Վերջակայն եկեղեցական ժողովոյ վճիռը՝ վճիռ է. և քանի որ նոյն վճիռը ուսուց ժողովը յետս կոչելու կամ կրկին քննութեան ենթարկելու պէտք մը չէ նկատած, այն վճիռը օրինաւոր է, և ամենևին Վ ՚ՀՏ. Կաթուղիկոսին յանձնելու պէտք մը չկայ:

Նոյն ժողովով որոշուեցաւ նաև Պալաժէնիա-յի նկատմամբ անցեալ մայիս 27ին որոշուածը եւ Թովբիթեանակ Հայոց բաղձանքները գրով յայտնել Ա. Եհ. Կաթուղիկոսին։ Ինկատաւորուելիքը կարող եղաւ 8–10 օր ալ ետ ձգել այս պարագան։ բայց վերջապէս Ս. Պատրիարքը հաձեցաւ գրել։ Գրել չգրել իրենց կամքն են կախում ունի. ժողովուրդը ինչպէս միևնոյն ոգով, նոյնպէս և ամէն եաքը իր հրապարակական ցոյցերն ետ չկենար. բուսական է որ ինք արմնցած է. պաշտօնական ցոյցերն աւելի մեծ արժէք ունի ժողովրդական ցոյցերը։

Ժողովին որոշմամբը կազմուեցաւ Մասնաժողով մը 4 եկեղեցականներէ և 4 աշխարհականներէ. որոնց պարտքն պիտի ըլլայ Սբ. Սոյ և Աղթամարայ կաթուղիկոսաց ընտրութեան եղանակը, անոնց Կ. Պոլսոյ և Ս. Էջմիածնի հետ յարաբերութիւնները. նոյնպէս Կ. Պոլսոյ առ Մայր Աթոռն ունենալիք յարաբերութիւնները ծրագրել։

Ընդհանուր Երեսփոխանական ժողովը թէ իր և թէ Ազգային ժողովոյ ձեռնհասութեան իրաւունքները պահեց ու պաշտպանեց խիստ մեծագոյն մասամբ։ Իսկ Սոյ և Աղթամարայ կաթուղիկոսութեանց խնդիրը կրօնական վարչութեան սահմանին մէջ մնաալէն եաքը, թէ անոնց և թէ Կ. Պոլսոյ առ Մայր Աթոռն ունենալիք յարաբերութիւնները ծրագրել անհնար պիտի ըլլայ, մինչև որ Մայր Աթոռին վճռակը հայտնուի, և ջատագովարգուի համաձայն ըղձից և բաղձանաց Ազգին։

Ակնհայտ մինչև յարդ Ազգային ժողովոյ վճռոյն պաշտպանութիւն ընելով չէթէ Նիկողայոս կամ Խաչատուր եպիսկոպոսաց անձին դէմ թշնամութիւն ունենալուն համար այն վճիռը իբրև զինք կը դործածէ ողջմիտ հասարակութիւնը. այլ միայն վճռոյն յարգը և անոր ճշդիւ դործադրութեան նախանձախնդրութիւնը պահել կը ցանկայ։

Շնորհիւ ժողովրդեան և Երեսփոխանական ժողովոյ, որ իբրև Հայ իրենց մայրենի եկեղեցւոյ պատուութեանը և անոր անարատ վարդապետութեանց, ծիսից և աւանդութեանց պաշտպանն են. Ազգային ժողովն ալ իբրև տուրբ ժողով այս յարդը առանալու իրաւունքն ունէր. ահա զինքը իր ձեռնհասութեանը ազատ սահմանին մէջ պահել փորձեցին. Թող ունայն տեղը չաշխատին կարծելու թէ անվաւեր կաթուղիկոսաց անձին դէմ թշնամանք ունի ժողովրդը, կամ Ազգ. ժողովոյ վճռոյն պաշտպանները։ Ազգ. ժողովը ցուցուց իբրև ծայրագոյն յանդուգն ընդհարումը, ըստ որմէ ժողովրդեան ինչ մեղք։

Հիմա որ այս խղճմտութիւնը ու այս յանձնառութիւնը արդիւնաւորեցաւ. կը մնայ Թովբիթեանակ ազդայնոց ուրիշ մէկ նշանաւոր գործը. այն է Սահմանադրութեան վերահաստատութեանը հոգ տանիլ և անոր սկզբունքները քննել։ Կը յուսանք որ այս մասին ալ ժողովուրդը պիտի յաջողի, քանի որ արթուն և պատրաստ մնայ. բայց ոչ վճռով կամ յուզմամբ, այլ հաստատուն կամքը և անդրդուելի առաջարկութեամբ, ինչպէս որ այս անգամ փորձով տեսնուեցաւ։ Ազգ և յուզմունք միասակար են Ազգին. ժողովրդը ինչ բան որ կ'ուզէ ստանալ, խնդրելու է, կրկին և կրկին և ատեն և միշտ խնդրելու է. կրնայ ըլլալ որ այսօր, վաղը, միւս օր զանց առնուի. բայց վերջապէս օր մը խնդիրը կը կատարուի։

Ընդհանուր ժողովրդեան Պատգամաւորութեան խնդիրը որ մեծ. 10ին մատուցուեցաւ։

Առ Երեսփոխանական ժողով կեդրոնական վարչութեանն Հայոց Տաճկաստանի.

Կաթուղիկոսական յանձնաժողովին պատրաստուած և երեսփոխ. ժողովիդ համակամ քուէարկութեամբ ընդունուած տեղեկագիրն «պալաժէնիան» քննելէն և մեծ ցաւով տեսնելէ պատկառելի ժողովդ «ամենայն Հայոց կաթուղիկոսի ընտրութեան եւս Սոյ և Աղթամարայ կաթուղիկոսներն ընտրել և երեք կաթուղիկոսութեանց յարաբերութիւնները օրինաւոր հիմանց վրայ հաստատել»։ Երեսփոխանական պատկառելի ժողովիդ համաձայն տեղեկագրին ուրդէն ընտրած է Հայոց ընդհանրական կաթուղիկոսը և Սոյ Աղթամարայ աթոռներուն համար ալ ընտրելիները որոշած է։ Բայց տակաւին ոչ Սոյ և Աղթամարայ վերջնական ընտրութիւններն եղած են և ոչ կաթուղիկոսութեանց յարաբերութիւնները հաստատուած։ Ըստի պարտաւորուած ըլլալով որպէս պատգամաւոր իդիմաց Ժողովրդեան կը համաձայնիմք խնդրել պատկառելի ժողովիդ. Նախ. փութալ Սոյ և Աղթամարայ Աթոռականներուն վախճանական ընտրութիւն, որպէս զի անտէրունչ թեմերն օրինաւոր տեսուչներ ունենան և Ազգի մէջն անախորժ և ապրումնաւոր տարաձայնութիւնները վերնան։ Երկրորդ՝ այս աթոռներն Էջմիածնականին հետ օրինաւոր յարաբերութիւն և համակերպութիւն ունենալնուն համար՝ ընդհանուր կաթուղիկոսին ձեռամբ ապահովել և անարատ պահպանել Հայաստանեայց եկեղեցւոյ առաքելաւանդ իրաւունքները, այն է Ա. Հայաստանեայց եկեղեցւոյ անկախութիւնն օտար ազդեցութենէ, Բ. Ամենայն Հայոց կաթուղիկոսական իշխանութեան միութիւնը Հայաստանեայց եկեղեցւոյ վարչութեան մէջ, Գ. ամենայն Հայոց կաթուղիկոսի պատասխանատուութիւնը եկեղեցւոյ և Ազգի առջև, որք ընդդրկելու համար ակզբունքով և իրաւունքով չանձնէր և աւանդելի են նմա Հայոց եկեղեցւոյ և Ազգի իրաւանց պահպանութիւնը և պաշտպանութիւնը, Դ. ի տեղի մեծաժամ «պալաժէնիայիոն գործադրել Հայաստանեայց եկեղեցւոյ նախնական և սովորական կանոնները, խափանելով զանոնք անընդմիջապէս Ազգի գիտութեամբ և հաւանութեամբ։ Եւ ի վերջոյ փութացնել Սահմանադրութեան վերաքննութիւնն, որոյ յապաղումն տեղիք տուած է ապատիկ դժգոհութեան, յուսահատութեան և կասկածոտու-

թեան՝ որ ամենէն վեհասկան է Ազգի համար։ Ի պարտաւորել Թեմենք շարժեալ կը համարձակիմք յիշեալ խնդիրները առաջարկել պահպանելի ժողովրդ և խնդրել, որպէս զի ամեն կարևոր միջոցները ձեռք առնու Եկեղեցւոյ և Ազգի ամբողջութիւնը պահպանել, եկեղեցւոյ զաւակաց և հովուաց փոխադարձ առնչութիւնները ամրացնել և ներքին ու արտաքին վտանգներէ սպառ կացուցանել։

Մատուցանելով ժողովրդին մեզ յանձնուած հանդրպերը պահպանելի ժողովրդ և պատրաստ ըլլալ առաւել ընդարձակ օրերն իրագործելու ժողովրդի բարձանքը այս առաջարկեալ կարևոր խնդիրներուն նկատմամբ։

10 փետր. 1867 կ. Պոլիս Սնամբ Նուստաս Ծառայք

* * *

Ընդհակառակ Մանզոնիի Ֆքեար լրագրոյն 290 թիւոյն մէջ Թիֆլիզեն հասած հետևեալ նամակը կը կարդանք, որ խիստ ուշադրութեան արժանի է։

Պ. Գէորգ Աբովեանցի անյայտ ըլլալը իմացուած էր բաւական առեներէ իվեր, նայն իսկ Էջմիածնի հրատարակներեն. բայց չէինք հաւատար անոնց խօսքին, ըստ որում այս դէպքը Ռուսիոյ կառավարութեան շատ պատիւ բերող բան մը չէր։

Կ'ըսպասենք աւելի ստոյգ և մանրամասն տեղեկութիւններ ստանալու. և առ այժմ առանց մեր կոյմէն դիտաղութիւն ընելու, մի միայն Վ ՀԿ. Կաթուղիկոսին ուշադրութիւնը կը խնդրենք։

Նատիւեանցի համար մինչև ցարդ դուէաներ լսած էինք. այս անգամ հակառակը կ'լսատանանք։

. . . . Խմբագիր

Թէպէտ քաղդ չունինք ձեր պատուական լրագիրը ստանալ և կարդալ, բայց միշտ ձեր քարի համբաւը լսում ենք, որ Ազգին ծառայում էք անձնանուէր հոգեով և էք խնայում ամեն ճշմարտութիւն յայտնել և ամեն ստութիւն յանդիմանել. ուստի վստահանալով ձեր ճշմարտասէր և ազգասէր հոգւոյն վերայ, գրում ենք մի ցաւալի իրողութիւն և խնդրում ենք որ հրատարակէք ձեր պատուական լրագրի մէջ։

Յայտնի է ձեզ . . . խմբագիր, որ բոլոր Ռուսաստանի մէջ միայն Ներսիսեան ուսումնարանն է, որից Ազգը յոյս ունի պատուական քաղել իրան ապագային համար. և սակայն ոչ մի ուսումնարան չկայ, որ իրան հիմնադրութեան օրից ի վեր այնքան խռովութեան և մատնութեան հանգիստարան դարձած լինի ինչպես Ներսիսեան ուսումնարանը։ Սրա պատճառը այն է, որ երանելի հիմնադրի կամքով այս դպրոցը կառավարութեան ձեռքը չէ յանձնուած, ինչպես յանձնուած են դժբաղդաբար Լազարեան և Խալիպեան ուսումնարանները։ Ներսիսեան դպրոցի ծածուկ թշնամիները նորա անկախութիւնը չկրկելու համար հաղար տեսակ չար հնարքներ գործ դրած են մինչեւ ցայսօր. երբեմն բողոքակոծութեան դպրոց անուանելով, երբեմն ապստամբութեան և երբեմն գայլամիզութեան. և այս անուններով անխղճաբար ուսուցած են նորան բուն Հայկական դպրոց լինելու համար։

Շատ երկար են այս դպրոցի գլխով անցած անցքերը, և եթէ դրենք, բաղմահատոր գրքեր հարկաւոր են. բայց մենք միայն հատուածաբար կը դրենք անցեալ ապրուստն ցուցնելու դէպքերը։ Յունիս ամսոյ մէջ գնդրոցիս Պատմութեան և Աշխարհագրութեան ուսուցիչ Գէորգ Աբովեանցը արձակուեցաւ Նպիրով հոգաբարձուի և Ֆօնդօեօվ տեսչի թելադրութեամբ, որպէս թէ Հայոց պատմութեան դասերի մէջ ազգատ հոգի է սովորցնում աշակերտներին, և նրա արձակմանից յետոյ ազգային պատմութիւնը և աշխարհագրութիւնը իսպառ վերացաւ դպրոցից, որ բոլոր ազգայնոց սրտի համար մեծ ցաւ է։

Այս դէպքը, որ խոցոտիչ ցաւ պատճառեց աշակերտաց սրտի մէջ շատ գաղանիքներ երևան հանեց։ Այսն դի, մենք որ ամենեւին չյոյս չունէինք՝ որ Նպիրովը և Ֆօնդօեօվը դպրոցի ազգային հոգւոյն թշնամի լինին, վերջը հակառակը տեսանք. որովհետեւ իմացուեցաւ որ այս անձինքը առանձին կապակցութիւն ունենալով տէրութեան որբանոցի դպրոցի (Գիմնազիայի) գլխաւոր տեսուչ (Ինսպեկտօր) Ռուսոպուդի Աելերսի հետ, նրա խորհրդովն են այս բաները արել։ Որովհետեւ երբոր աշակերտները չը դիմանալով բողոքեցին առաջնորդին՝ Հայոց պատմութեան վերանալուն համար, առաջնորդը մեծ ժողով կազմեց աշակերտաց գանգատները քննելու, և քննութեան մէջ մի քանի աշակերտներ խոստովանեցան որ Ֆօնդօեօվ տեսուչը ինքը ծածուկ փոյթ է տարել իրանց մեծ խոստմունքներ խոստանալով, որ ստէպ ու մոռտ բաներ գրեն, որպէս թէ Գէորգ Աբովեանցը դասախօսութեան ժամանակ տերութեան դէմ բաներ է խօսում։ Յովհաննէս Աղբեգեանցը և Գ. Գալուստեանցը քննութեան ժամանակ Ֆօնդօեօվի երեսին ասացին՝ "Դուն չէիր որ ստիպեցիր մեզ, թէ՝ աշակերտաց անուններ կատրեցէք, և թէ ինձ վերայ գրած բան գրտնէք հանեցէք։ Դուն չէիր որ փող տուիր, թէ՝ Աբովեանցի դաս ասելու ժամանակ աշ

խոստեցէք որ տէրութեան դէմ բաներ գանէք և գրէք »։ Մի ուրիշ կողմէ Գարեգին Պատրիարքն ալ ըսաւ «Մեր ձեռքերը կապուած են մեզ ինչ ասել, որ ուզում ենք, բայց մեր տեսչը խստութիւն է ցանում մեր մէջ և ընկերը ընկերին թշնամի չինում, խաթարում և մոքերը պղտորվ»։ Յովնաթովը ամենևին չը կարողացաւ պատասխան տալ այս աշակերտներին ասածներին և իսկոյն ժողովականաց վրայ ուղարկեցաւ դպրոցից, որովհետև Իւրան պաշտպան Նադիրովն էլ արդէն փարիզ էր ուղեւորած։

Բայց սրա արձակուելն ինչ օգուտ, որ դպրոցը պղտոեցաւ Հայոց պատմութեան և աշխարհագրութեան դասերից. և խեղճ Գէորգ Ալբովեանցն էլ գնաց Նադիրովի և Յովնաթովի մատնութիւններին։

Ըրդէն երեք ամիս է, ճշմարտասէր խմբագիր, որ աղնուաբարոյ Գէորգ Ալբովեանը անյայտացած է, չենք իմանում գիշերը սև կատով Սիբիր է՞ ամփոփուած, անկոյս բանտի է՞ մատնուած, թէ ջրամոյղ եղած։ Ոչ իրան խղճալի մայրը գիտէ, ոչ եղբայրքը և ոչ բարեկամքը։ Այս ինչ է մեր հայասէր երիտասարդների վիճակը Ռուսաստանի մէջ. մի քանի տարուց առաջ Խաչատուր Ալբովեանը անհետացաւ, յետոյ Նալբանտեանը բանտերի մատնուեցաւ և յանագայթ վախճանեցաւ, այժմ էլ Գէորգ Ալբովեանը անյայտացաւ։ Ըրդեօք ինչ անէն խեղճ երիտասարդները, երբոր Ռուսաստանի մէջ այս ճակատագիրն ունին ամեն հայասէրները։ Ի՞նչ պէտք է աներ խեղճ Ալբովեանցը, միթէ Հայոց պատմութիւն դաս տալով պիտի կործանէր Ռուսաց հղօր տէրութիւնը։ Բայց մեծ կարողութեան հասմոր ի՞նչ օրէնք և ի՞նչ կանոն, և մատնիչների համար ի՞նչ խղճմտանք։ ։

Այսպէս է ահա՛ Ռուսաստանի մէջ ուսումնականների վիճակը, հայասէրները դպրոցներից հանուում են, անյայտանում են, իսկ Ռուսահերները և դարտակ գլուխները փառաւորվում են։ Ի հարկէ Անդրիանեանց տէր Սահակի նման չաղակրատը դպրոցի մէջ կը մնայ, որ անունն Ստուածաբան գրած խեղճ աշակերտաց գլուխները մաղեցնում է Դամայ և Նասայ պատմութիւններովը, եսպէս էլ սրա նման աղուեսաբարոյ ուսուցիչները. և Գէորգ Ալբովեանցի նման պատմագէտ երիտասարդը կը մատնուի և ի՛անյայտանայ՝ երբեւ ապստամբեցուցիչ աշակերտաց։ Շատ ցաւեր և շատ դարտեր կան գրելու, բայց ինչ անես որ մեր դժբաղդ երկրի մէջ ցաւը յայտնելու աղատութիւն անգամ չունինք մեր ձեռքից։ Ուստի այս չափը բաւական համարելով միայն այս կտորներ, որ եթէ մեր ընթերը կարծուղխով իրան ուշադրութիւնը չը դարձնէ Հայոց դպրոցների տարական վիճակի վերայ ևս չաղատաէ, այլ ընդհակառակը Ներսիսեան դպրոցն էլ չարականների խորհրդով Ազարեան և Խալիբեան վարժարանների անդունդը գլորի, այնուհետև կասենք Ռուսաստանի մէջ մընաց բարով Հայոց լեզուն, Հայոց պատմութիւն, Հայոց աղքատութիւն ։ ։

Ընդունեցէք մեր ողջոյնքը ։ ։ ։ խմբագիր, և հրատարակեցէք այս համառօտ յուշքը դէպքը, որպէս զի ձեր աղքատիկ պաշտօնակիցներն էլ իրանց պատուական թերթերի մէջ առնեն, և եթէ հնար է թարգմանելով մի Ցրանաերէն լրագրի էլ տուէք, որ հրատարակէ. վասն զի հառաջ իմացէք, որ չէ թէ միայն ճշմարտութիւն է այս գրածը, այլ երկիւղից դեռ շատ բան պակաս է մէջը. վախենալով մենք մեր անուններըը չենք գրնում, բայց եթէ ուզենաք, կարող էք Սարգիս եպիսկոպոսից տեղեկանալ, որ ահա ուղեւորեցաւ ի Պօլիս, և եթէ որ ուզենայ էլ չկարող թագցնել Գէորգ Ալբովեանցի անհետանալու ցաւալի դէպքը։

Մնանք ցաւած և վշտոված սրտով. 29 Յունվ. 1867 ի Տփղիս եւայլն։

* * *

Ապրիլ փոքր թերթին մէջ կը կարդանք.

Հետևեալ նամակը աղքատեր հայու մը կողմանէ ևս. կաթողիկոսին ուղղուած է։

«Ի Հափսալ սրբազնասուրբ Հայրապետ։

«Այս շաբթու Թիֆլիզէն գրուած նամակ մը կարդացինք ազգային թերթի մը մէջ։ Հայ երիտասարդ մը, խանդավ և ապագայով լի երիտասարդ մը, անյայտացեր է։ «Չենք իմանում, կըսէ նամակագիրը, գիշերը սև կտաւքով Սիբիր է՞ տնփոփուած, անկոյս բանտի է՞ մատնուած թէ ջրամոյղ եղած»։ Այս երիտասարդը ուրիշ նահատակի մը անունը կը կրէ, Խաչատուր Ալբովեան, իր անունը է Գէորգ Ալբովեանց՝ երբեմն դաստատու պատմութեան Ներսիսեան վարժարանին մէջ։ Օգոստոս ու Նալբանտեանը կը յիշէ նամակագիրը և իր հայրենասէր սրտին կը բղխի սա աղաղակը. «այս ինչ է, կըսէ, մեր հայ երիտասարդներուն վիճակը Ռուսաստանի մէջ. մի քանի տարուց առաջ Խաչատուր Ալբովեանը անհետացաւ,

յետոյ Նալբանտեանը բանաերի մասնուհեցաւ և յաւարար վախճանեցաւ, այժմ ել Դէորդ Ալբովեանը անյայտացաւ»։ Կուլայ, այլ արտասուքն անգամ արգիլեալ է. «շատ ցաւեր և շատ դարդեր կան գրելու, բայց ինչ օգուտ որ մեր դժբախտ երկրի մէջ ցաւը յայտնելու սղաւտութիւնն անգամ չափշտակուած է մեր ձեռքից» . . . .։

«Մահուան խօսքեր են ասոնք, սրբազան Հայրապետ, որոնք բոլոր կարեկցողներուն սըրտին մէջ դեռ կը թընդան։

«Ուսաստանի մէջ մեր ազգակիցներուն նիւթական վիճակին վրայ շատ ցաւագուխէ բաներ կը լսուի և Թիւրքիոյ քրիստոնեայ ժողովուրդներուն վիճակին վրայ Եւրոպիոյ կառավարութեան աչքը կը գալարի։ — Իրաւ են արդեօք, սրբազան Հայր, Խաչատուր Աբովեանի սակէ մէկ քանի տարի առաջ անյայտանալը, Նալբանտեանցի կտաւամահ ըլլալը, Դէորդ Աբովեանցի երեք ամէն չիլեր անյայտ պատճառներով անհետանալը . . . .։

«Սրբազան Հայր, իւրաքանչիւր մարդկային արարած Աստուծոյ ձեռքէն ելած՝ որեգական նիւթեւ տեղ մը բռնելու իրաւունք ունի, և տեղ մը կայ միշտ որ մահացելոյն այս աշխարհէն անցնիլը կը նշանակէ. աստղակին անեզամ դիակը իր մորը իրաւունքն է, և մարդկային բնութեան սիրականը զոհ գացող գաւառապետելոյն գերեզմանին վրայ դեռ իրաւունք ունի իր սիրականը երթալ լալու։ Մեր աղգակիցները Ուսաստան մէջ իրենց հայրենասիրութեանը յանցանքին համար ոչ կը գնահատուին, ոչ կը կախվին, չեն մեռնիր, այլ անյայտ կըլլան . . . . Մահուան բան մըն է երբ որ և է յանցանքի համար մարդ մը կըսպանեն. այլ՝ անուն չունի սակայն երբ գոյութիւն մը բնաջինջ կըլլայ . . . .»

* * *

Խմբագիրը Աբգարեան Թաղէն երկրորդ վարժարանաց Հոգաբարձութիւնը նոր տարւոյ սկիզբէն ի վեր հրաժարած ըլլալով, առ ըզայն պատասխան Թաղ. Խորհուրդը անցնալ շաբաթ մանչ տղայոց վարժարանին համար նոր Հոգաբարձութիւն մը կազմել փութայ վարժարանին և գաւառացւոց և այլ պիտոյից վրայ հոկելու ու բարեկարգութեանը և յառաջդիմութեանը հոգ տանելու։

Աղջկանց վարժարանի վրայ արդէն խնամակալ Տիկնանց ընկերութիւնը կըշարունակէ իր հակաղութիւնը, և ազնիկ տղայոց մնաւորական պարագաների մասնաւոր փոյթ և խնամք կը ցուցնի, որով բոլոր Թաղեցւոց շնորհակալութիւնը և համակրութիւնը արժանացած է։ Խնամակալութիւնն ալ տարւոյս սկիզբը հրաժարական տուած էր Հոգաբարձութեան հետ, բայց Թաղ. Խորհուրդը չընդունեց, իսկ խնամակալութիւնը կրկին նոյն հրաժարը ընդունելու համար առաջարկեց որ Աղջկանց վարժարանի տեսչութիւնը Հոգաբարձութենէն անկախ կերպով վարե, որպէս զի ըստ ամենայնի ձեռնհաս ըլլայ աղջկանց գաստիարակութեանը և յառաջդիմութեանը։ Թաղ. Խորհուրդը այս պարագային ընդունելով, հաստատուց խնամակալութիւնը իր պաշտօնին մէջ որով և չյանդիմեցաւ Հոգաբարձութիւնն ալ վերահաստատեց։ երկու ամսոյ չափ ատենէն ետքը (որով և այնչափ տարածաժամ Թաղացոց տեղի տրուելոյ) պարտաւորեցաւ նոր Հոգաբարձութիւն մը կազմել։

Հրաժարեալ Հոգաբարձութեան դործակիցներ անդամից մէկ տարուան չափն ու տարժանելի աշխատութիւնը պետած ըլլալով կը ցաւինք անոնց տարաժամ հրաժարականին վրայ, ման կ՚ըսա մեղ Թաղ. Խորհրդոյն և իր մէջ Աղջկանց վարժարանի նկատմամբ ծագած անհամաձայնութիւնը վերցնելու դժուարութիւն մ՚ալ չկար։

ՊԱՊԱԿԱՆ ՄԵՃՄՈՒԱՆ

Ակճմուան սկիզբէն ի վեր մի օրագրին հետ վիճաբանութեան մտեր է նէ, ուրիշ դէնք մը կամ հնարագիտութիւն մը գործածած չէ, բայց եթէ խնդրէ ի խնդիր անցնիլ, իր սեպհականին դէմ հայհոյել և նախատել, և վերջապէս ինքզինքը իր եւ-ուխ ծեփին նետել։

Ընթերցասէր հասարակութիւնը Ակճմուային այս փախուստները գիտէ ու շատ վորձերու մէջ տեսած է, Ընդ այս անգամ ալ Յամանակի և Փոնջի դէմ նոյն ընթացքը կը բռնէ։

Ակճմուան ինչպես ամէն անգամ խնդիրները կը փոփոխէ, նոյնպես իր լեզուն ալ փոփոխել սկսած է. առջի շաբթուն ինք Բոլշեւիկ ու սպառնալիք կ՚ընէ որ ազգային խմբագրաց գրիչն ու լեզուն բռնէ Ազգը, եթէ ոչ ինք ալ լեզու և գրիչ ունի ամէն նախատինք տեղալու Ազգին և Եկեղեցւոյն վրայ. երկրորդ շաբթուն երբ իր բողոքին պատասխանը չէ ընդունած, և արդիւնքը չէ տեսած, կ՚ելլէ կ՚ըսէ թէ ես ազգիկ գիտեմ որ Ազգը և կրօնականները անոնց գրածը չեն ընդունիր. ու վկայութիւն չբերելով, ինք վկայութիւնը մեզմէ կը պահանջէ. ի՛նչ տկար փաստաբանութիւն։

Թէպետ ընթերցողը Ակճմուային առջի բողոքին և սպառնալիքին հետ եաքի հիւմը բաղդատելով, դիւրաւ կրնայ հետեւցնել թէ ի՛նչ աստիճան անարգ փախուստի ճամբայ մը է, և թէ վկայութիւն բերել հարկ ըլլալը, մեր երկուքէն որուն աւելի կը պատշաճէր, բայց մենք այս մասին ալ Ակճմուան ապստամբելու համար մեր վկայութիւնները յառաջ կը բերենք, մանաւանդ որ Ակճմուան ինք իր ոտքովը ծուղակին ինկած է։

Վերջին Թուռվը կը յայտնէ Ակճմուան թէ Ասկական և Հռոմէական եկեղեցւոց մէջ ի վաղուց անտի համաձայնութիւն մը կայ, և թէ այս պատճառաւ տակաւին Հռոմի կաղմէն Ասյոց եկեղեցւոյն վրայ հիւմ մը տեղի ունեցած չէ։

Այսիկա մենք ալ գիտենք. գիտենք նաև թէ երեք ամենօրեայ ժողովներուն վաւերականութեամբն եղած ընդհանուր եկեղեցւոյ վճռին ի՛նչ է. գիտենք Հռոմէական և Պապական եկեղեցեաց իրարմէ տարբերութիւնը, կարդացած ենք նաև մեր երջանկայիշատակ նախնեաց, Յովհաննու Որոտնեցւոյն, Գրիգոր Տաթեւացւոյն, Յակոբ Նալեանի և նոր հանգուցեալ Շ.ահնազարեանի և այլոց բազմաց գրութիւնները:

Ակճմուան ալ ի հարկէ տանք գիտէ ու կարդացած է. ուստի ամենևին տեղիք մը չկայ Ակճմուային խորամանկութեամբ մը այնպէս ցուցնելու թէ Հայոց եկեղեցին արդի Պապական եկեղեցւոյ հետ համաձայնութիւն մ'ունի. ոչ, Ակճմուա, աստանկ չէ ու չկրնար ըլլալ:

Հայդ խնդիրը մեր հոգեկոչ նախնիքը և դեռ 10 — 14 տարի յառաջ յուզուած կրօնական վիճաբանութիւնները լուծած են:

Սակայն մենք մեր վիճաբանութեան առարկան ոչ Պապն և ոչ անոր եկեղեցին ըրած ենք. այլ մեզմէ բաժնուող ազգայինները. կամաւելի ճիշդն ըսելով բաժանուած ազգայնոց կղերը, Փրոտեսթանտայի աշակերտները, որոնք ոչ միայն իրենց մայրենի եկեղեցին ուրացած են, այլ և այնպէս անարգանօք ու վատութեամբ կը նախատեն ու կը պախարակեն, զոր և ոչ իրենց պաշտած եկեղեցին և Պապը իրենց մտքէն անգամ անցուցած ունին, ինչպէս որ Ակճմուային բերնէն ալ սահեր էր այս վկայութիւնը:

Այդ Հայոց ազգին և բոլոր եկեղեցականաց պատմութիւնն ալ այս մասին է: Խղճի ազատութիւնը ոչ միայն կընդունինք, այլ և կը պաշտեինք. իւրաքանչիւր մարդ իր խղճին և կը բնաւքին վրայ ազատ է. բայց ոչ երբեք ազատ է ուրիշին մանաւանդ իր ծնողին խիղճը և կրօնքը բռնաբարելու. մեզմէ մաս մը ազգայինները գացեր Պապին յարեր են. ասիկա ոչ ոք պիտի կ'ընէ: Հայոց երբ այդ Պապական ազգայինները կ'ելլեն կ'ուրանան իրենց մայրենի եկեղեցւոյն ուղղափառութիւնը,

կը ծաղրեն անոր կրօնքը ու հաւատը.

կը նախատեն ծէսերն ու արարողութիւնները.

Վենետիկի Ազգապետը և Վենետոյի Քահանայապետը Հռոմի Պապը հերետիկոս կ'անուանեն.

Կ. Բ. Վ. Ն. Հայոց եկեղեցւոյն մէջ Քրիստոսի արձանը միայն կը թողու.

Պաթրոնեան մը Հայաստանեայց եկեղեցին իր վարդապետութեամբը հակառական և հեռի յառաջնորդութենէ Հռոմայն սրբոց է կ'ըսէ:

Պապական Ակճմուա մը Հայաստանեայց եկեղեցւոյ առաքելականութիւնը և ուղղափառութիւնը կ'ուրանայ.

Պապական Հայ կղերը մը Պապական եկեղեցիին դուրս փրկութիւն չկայ կ'ըսէ.

Ուրիշ մը Պապական եկեղեցւոյ հաւատքին զատ ուրիշ ձշմարիտ հաւատք մ'ալ կայ ըսել նէ, Հայաստած չկայ կ'աղաղակէ.

են են են

Երբ այս ամենը առանց խղճելու, առանց ամչնալու վերենք ծնող եկեղեցիէն, առանց պատկառելու իրենց նոր գաւանած եկեղեցիէն (որ ըստ Ակճմուայի դեռ հիմ մը ուզած չէ Հայոց եկեղեցւոյն համար,) ճիշդ վերծիներու և մարդապող Փրոտեսթանտայի հետևողութեամբ ամենայն խղճի ֆօյ կը գրեն և կը հրատարակեն պապական աղտայինք. Հայոց ազգը, Ակճմուա, ալ կրնայ համբերել, կրնայ հանգուրժել իրմէ վիժածներուն անները բերլը և անամօթաբար ամբարշտութեանց և լրբութեանց: Ի՞նչ կը մնայ ուրեմն ընել. ոչ այլ ինչ, բայց եթէ աշխարհի առջև նշանակ ընել այն խորթ ազգայնոց լրբութիւնը, խայտառակ և ամբարիշտ վարկութիւնները ու յարձակումները. որպէս զի խորտակուին այն ճիղճիղիական հնարքները, որ մեր մէջէն միամիտները որսալու սահմանուած են, միայն Փրոտեսթանտայի հաճոյ երևնալու համար:

Հիմա այս պատճառէն ծագած է մեր ու բոլոր ողջամիտ ազգայնոց պատերազմը ընդդեմ Պապական ազգայնոց կղերին. իսկ անոր ժողովրդեան մեծ մասը գիտութեան և եղբայրութեան անուանին հնարքը վայելելու արժանաւոր են: Ակճմուան ալ Պապական կղերին գործքին եղած է, որով մեր յարձակմանց ենթակայացած. Թող բայց ի բաց հերքե կ. վ. Ր. Ն. ի տեսակը, Պաթրոնեանի գիրքը, յետս կոչէ իր գրածները. և ահա իրեն ալ եղբայրութեան ձեռք կը կարկառենք. թէև ինք Պապական եկեղեցւոյ ալ յարած մնայ:

Մինչև կը վերծովի Ակճմուան մեր գրուածոց վրայ. և ի՞նչու մեզմէ վկայութիւններ կ'ըսպասէ. մի'թէ ինք չգիտեր կամ չընդդատ թէ ոչխարի անողորմ ու ամբարիշտ գրուածներ են անոնք Հայաստանեայց եկեղեցւոյ դէմ, որոնք բոլոր Ազգը և բոլոր Հայ եկեղեցականները ի խոր խորացած են: Աւասիկ կը փութանք ըսելու թէ մեր բոլոր գրութեանց համամիտ է Ազգը և Հայ եկեղեցականութիւնը,

Գէորգ Վեհ. կաթողիկոսը,

Իսայի Ծ. պատրիարքը,

Գօղաս Ծ. պատրիարքը,

Ինչը արքեպիսկոպոսունք, վարդապետք, քահանայք, և աշխարհականք ամենքն ալ. ապ նանք որ Հայ են և ուսասրչի պաշակ, ապ նանք ուսասրչի ուղղափառ Եկեղեցւոյ դեմ յարձակմանց չեն կրնար անտարբեր մնալ. մանաւանդ իրենց խորթ եղբայրներուն յարձակմանցը. քանզի եթէ նոյն ինքն Պապն ընդ այդ յարձակումը, (որ Աէձմեան մեծ բան մը համարած մեր առջև կը դնէ՞) ոչ երբեք այն ցաւը կ'ըզգայինք, ինչ որ հիմա կ'ըզգանք մեր աբեհայիներուն հարուածին տակ. այս մերձաւորի հարուածն աւելի ազեսալի ու անտանելի է:

Անոնք լաւ պիտի չգիտնանք. քանի որ այդ յարձակումները կան ու կ'ըլլան հետզհետէ, և քանի որ մեզմէ մարդ գտնելու ձիգերն ի գործ կը դրուին: Իսկ Աէձմեսյի ղեսւելի նախատանայ և հայհոյութեանց պատասխան ջանինք. Թող Աէձմեան տրջսի կ'ուզե ինքզինքը էէ-ջսե՞ Ջէվէն նետէ. Նասարակութիւնը կրնայ գտնել Յամանակն ու Աէձմեսյի արժանիքը. և ինչպես Թքինք այն գրչին ու գրուածքին վրայ, նոյնպես պիտի Թքինենք անկէ եառքը գրելնք հայհոյութեանց վրայ:

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՓՐԿԻՉ ՀԱՅՐԵՆԱՍԻՑ

Ա՛յս անունը բաւական էր Հայ ժողովրդեան զգացումն արթնցնելու և ոգի ազդելու. իսկ երբ անիկա Թատերաբեմին վրայ կենդանի նմանութեամբ կ'երեւայ, երբ անիկա պատկերի հայրենասիրութեամբ մը ի պատերազմ կը մղուի և կը նահատակուի, երբ խուռն բազմութեան առջև Վարդան իր արիւնը կը Թափէ Հայաստանեայց եկեղեցւոյ և Ազգի փրկութեան համար, այն հայազգի բազմութեան առջև՝ որ չէ Թէ Վարդանայ գործակից, այլ սակ ստասաւանդող հանդիսատես կ'ըլլայ. ահ ի՛նչ չնաշխարհիկ համակրութիւն մը խանգ և աշխոյժ կ'արձարձի Հայ ժողովրդեան սրտին մէջ:

Ահա այսպէս ազգ ստասրութիւնն մ'ըրաւ անցեալ երեքշաբթի գիշեր Նասմի Թատրոնին մէջ ներկայացուած Վարդանայ ողբերգութիւնը, որուն հանդիսատես եղած էին անթիւ բազմութիւն հայազգի ժողովրդեան. շատերը կը հաստատէին Թէ այս տարի և ոչ մէկ Թատրոնի մէջ և ոչ մէկ ներկայացման այնչափ բազմութիւն մը եղած է:

Ողբերգութեան հեղինակ Աէտէֆճեան Եփենտին ստաղանդը կը փայլէր իր երկասիրութեանը մէջ, որ ազգաս և վառվռուն բացատրութիւններով, խնամատարից ու պերճ ստացուածովք և հայրենասիրական զգացմամբ լի էր: Ժողովրդեան կողմէն քանի մ'անգամ լսես կոչուեցաւ, և մեծ ծափահարութեամբ ողջունուեցաւ:

Վերջաւանական խումբին մէջ Թէպէտ քանի մը Թերութիւններ նշմարուեցան, բայց Թէ պատրաստութեան համար միջոցի պակասութիւնը և Թէ պէտք եղած Թատով դերասանի չգտնուիլը պատճառ եղած էին: Սակայն նշանակութեան արժանի են Պ. Վարդովեան որ Վասակայ մասը կը ներկայացնէր խիստ յարմարութեամբ. Պ. Ընէմեան, որ Վարդանայ մասը կը ներկայացնէր խիստ վայելչութեամբ: Օր. Վարագաշեան, որ Վարդանայ կնոջ մասը կը ներկայացնէր խիստ արժանաւորութեամբ. Պ. Ղամեան որ Վարդանայ որդւոյն մասը կը ներկայացնէր նշանաւոր յատկութիւններով. Պ. Զօլաքեան՝ որ Յաւսէփ եպիսկոպոսի մասը կը ներկայացնէր գոհացուցիչ կերպիւ:

Տ. Պիլեճիկեան որ Հայաստանեայց ոգին կը ներկայացնէր, այնպէս խիստ սրտաշարժ եղանակաւ երգեց, որ ամենուն հաճութիւնը գրաւեց:

Ողբերգութեան մէջ գտնուած երգերուն եղանակները ժողովրդեան վայ ազգու ստասւորութիւն ըրին, ուստի շնորհակալութեան արժանի է Զօլաքեան Տիգրան էֆենտին, որ նոյն եղանակները պատրաստած է այնպէս գեղեցիկ յարմարութեամբ:

Վերջինիս Վարագաշեան 8 տարեկան օրիորդին խօսած ստանաւորները բոլորին ուշադրութիւնը և համակրութիւնը գրաւեց, և սաստիկ ու մեծ ծափահարութեամբ ընդունուեցաւ:

Ողբերգութիւնը չսկսած, Պ. Թ. Թոգաւորեան աշխոյժ պատանին Հայրենասիրական ազգու ատենաբանութիւնն մ'ըրաւ Վարդանայ և անոր չիշատակին նուիրած:

Վերջապէս այս ողբերգութիւնը մեծ ու նշանաւոր ստասւորութիւն մ'ըրաւ բոլոր ներկայ գտնուողներուն վրայ. այնպէս որ շատեր նոյն գիշերը կը հարցնէին Թէ ուրիշ անգամ մ'ալ երբ պիտի ներկայացուի: Ահա կը փութանք ծանուցանել արդյ հասարակութեան Թէ այս երեկոյ կրկին անգամ պիտի ներկայացուի սոյն ընտիր ողբերգութիւնը, Նասմի Թատրոնին մէջ, հարկաւ առջինէն աւելի մեծ պատրաստութեամբ:

Այս անգամի ներկայացումը Ազգին սիրտը տոչորող և Սկսերիայ սահմանեայ մէջ նահատակուող Նալբանդեանց Հայրենասիրին չիշատակին համար նուիրուած ըլլալով, Օր. Ն. Վարագաշեան Նալբանդեանցի վայ պիտի ստեղծագործէ, և Վերջինիս Վարագաշեանն ալ Նալբանդեանցի յօրինած հայրենասիրական մէկ տաղը պիտի երգէ:

Տարակոյս չկայ որ ժողովուրդը մեծ հանդիսութեամբ մը պիտի դիմէ այս ազգային հանդէսը պատուելու, մեր վառաւոր նախնեաց չիշատակին համար. որ Հայոց համար մնացած միակ Թատրոնն է:

ՏՆՕՐԵՆ = ԽՄԲԱԳԻՐ
ՍՏԵՓԱՆ Պ. ՊՕՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ